Ո՛չ այդպէս, այլ զդա յայտնագոյն սպանցուք ի կախաղանի, որպէս զի խրատ լիցի ամենայն տեսողաց և լսողացն։

Եւ ի միւսում Եշիս, որ օր ամսոյ Յունիսի ԻԸ-ն[1]) եղև, հանեալ ի բանտէն և բազում հարց և փորձ արարեալ եւ խրատ՝ ոչ հաւանեալ. եւ ի մեծամեծաց բազումս բան ձգեալ առաջի նորա ողոքական թէ Կրկին դաւանեա՛ զնա մարգարէ և սիրելի Աստուծոյ։ Եւ նա տվեալ զպատասխանին զայն խստագոյն թէ Նա՛ կախարդ և սուտ էր՝ մոլորեցուցանողն զձեզ. հաւատ՝ մերս հաւատ, որ Քրիստոս Աստուած արարիչ երկնի և երկրի, զոր դուք կուրացեալ էք ի լուսոյ նորա և խաւար ըզդեցեալ էք հոգով և մարմնով, զոր կայ ձեզ տանջանք անվերջ յաւիտեան և քրիստոնէիցն փառք յաւիտենական, զոր և ես յուսամ առ Քրիստոս Տէրն իմ, զի արժանի արասցէ լուսոյն իւրոյ։ Ահա այլ ևս զի՞նչ ասէք, եդեալ էք զերկաթն ի պարանոցս և զձեռս կապեալ. ահա՛ կախաղանն. հաւատ Քրիստոսի է հաւատ, զոր ես յուսամ գտանել ողորմութիւն ի նմանէ։ Ոչ ժուժեալ զայս լսելոյ անօրինացն, յուսային եթէ դարձցի, այլ ոչ եղև ըստ նոցա կարծեացն, զի սա յոյժ խայտառակեաց այսքան բանիւքս։ Եւ դիմեալք ի վերայ նորա՝ հանին զերկաթն ի պարանոցէն և արկին զպարանն և կախեցին զնա բարձրագոյն ի տեսս ռամկաց՝ խեղդամահ արարեալ չարաչար, զոր և նա աւանդեաց զհոգին առ Քրիստոս յոյսն ամենայնի, պարզ և զըւարթ երեսօք և ուրախացեալ կերպարանօք ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Այս եղեւ Եշի Է-երորդ ժամու աւուրն. և զժ պահու ցերեկիս եղև որոտ սաստիկ և հնչեաց հողմն և ամպոց խառնակումն մինչև երեկոյանալ աւուրս, և ի մտանել ա-

2) ԻԵ-ն.